ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» սեպտեմբերի 2025թ. **N-----Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 5-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 1-ԻՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ մասով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Երևան քաղաքի ավագանու 5-րդ նստաշրջանի 1-ին նիստի օրակարգը (կցվում է):

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՕՐԱԿԱՐԳ

1. Երևանի ավագանու 5-րդ նստաշրջանի 1-ին նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N266-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին: (Զեկուցվող)
3. Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին: (Զեկուցվող)
4. Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին: (Զեկուցվող)
5. Գ. Նժդեհի փողոցի հ.23/4 հասցեում գտնվող՝ սեփականության իրավունքով Կարեն Սահակյանին պատկանող հողամասը Արտաշատի խճուղու հ.63 հասցեում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի հետ փոխանակությանը համաձայնություն տալու մասին: (Զեկուցվող)
6. «Երևանի հ.104 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչելու մասին: (Զեկուցվող)
7. Երևան քաղաքում անձրևաջրերի հավաքման, ֆիլտրման և ոռոգման նպատակով օգտագործման 2026 թվականի բնապահպանական ծրագիրը հաստատելու մասին: (Զեկուցվող)
8. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Տիչինայի փողոց 3-րդ նրբանցք հ. 4/1 հասցեում բնակելի թաղամասի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
9. Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի Անաստաս Միկոյան փողոց հ. 111/7 հասցեում ֆուտբոլի դպրոցի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
10. Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Բագրատունյաց փողոց հ.70/2 հասցեում հասարակական նշանակության շինության՝ մեծածախ առևտրի կենտրոնի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
11. Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Արին-Բերդի փողոց 25 հասցեում պահեստային շինության (անգար) կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
12. Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Դավիթ Բեկի փողոց հ. 54/12-54/9 հասցեում հեղուկ վառելանյութի լիցքավորման կայանի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
13. Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Գայի պողոտա հ.45/6 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականաց-մանը նախնական համաձայնություն տրա-մադրելու մասին: (Զեկուցվող)

14. Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Արին Բերդի փողոց 5-րդ նրբանցք h.13/7 հասցեում օգտագործված յուղերի և քսայուղերի վերամշակման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
15. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N268-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Չզեկուցվող)
16. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N268-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Չզեկուցվող)
17. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N41-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Չզեկուցվող)
18. Երևան քաղաքի ավագանու կողմից անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցի գույքահարկի արտոնություններ սահմանելու և համայնքի բյուջեից վճարում կատարելու մասին: (Չզեկուցվող)
19. Գույքը սեփականության իրավունքով անհատույց հանձնելու մասին: (Չզեկուցվող)
20. Երևան քաղաքի վարչական տարածքում ներհամայնքային կանոնավոր փոխադրումների միասնական ծառայություն ներդնելու, միասնական ծառայության կազմակերպման տեղական վճարը վճարելու եղանակը և տրանսպորտային միջոցում վավերացնելու կարգը սահմանելու մասին: (Չզեկուցվող)
21. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N265-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու, Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N267-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու և Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի N95-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին: (Չզեկուցվող)
22. Երևան քաղաքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին: (Զեկուցվող)
23. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N268-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Զեկուցվող)
24. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի նոյեմբերի 18-ի N37-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին: (Զեկուցվող)